Ալեքսանդր Ծատուրյան

Մուսա

Այս սև կյանքի մաշուկ օրերն երգելով,
Քո ձայնին եմ հնազանդում, ո՛վ մուսա.
Կյանքը սիրել սրտի խորո՛ւնկ վերքերով
Քո պատգամն էր՝ մանուկ օրից ես ուսա:

Դու ինձ արիր «Երգի՛չ, կյանքը չէ՛ երազ.
Կյանքը խա՛չ է տառապանքի, փորձության.
Այնտեղ կրոիվն անհավասա՛ր հանապազ.
Այնտեղ չա՛րն է դափնին տանում հաղթության...

Դու ինձ ասիր «Դուրս եկ կյանքի ասպարեզ,
Վերք ու ցավից դու երգ հյուսիր սրտալի.
Թո՛ղ քո երգում, արշալույսի զանգի պես,
Արև-կյանքի հընչե՛ ավետն ըղձալի...

Դու ինձ ասիր «Վըշտի ծո՛վ է քո երկիր,
Եղբայր ունիս անմխիթա՛ր, անտերունչ,
Նա դարերով բախտահալա՛ծ, տարագի՛ր,
Արյան խա՛չ է կրրծքին կրրում անմռունչ...

«Թո՛ղ հույս հընչե, վիշտ մրրմընջե քո քրնար.
Թո՛ղ նա խոսի քո հեգ ազգի սրրտի հետ.
Քանի քո շուրջ դեռ տիրում է ժանտ խավար,

Դու ա՛յլ կոչում չունիս կյանքում, հա՛յ պոետ...

Այս սև կյանքի մաշուկ օրերն երգելով.
Քո ձայնին եմ հնազանդում ո՛վ մուսա.
Կյանքը սիրել սրրտի խորո՛ւնկ վերքերով
Քո պատգամն էր՝ մանուկ օրից ես ուսա...